ՀԱՅ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՄԻՏՔՆ ՈՒ ԳԱՂԹԻ ԵՎ ՊԱՆԴԽՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ XIX ԴԱՐԻ 70-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

XIXդ. երկրորդ կեսին սուլթանական վարչակարգի ստեղծած անտանելի պայմանները պանդխտությունն ու գաղթականությունը այնպիսի մեծ չափերի հասցրին,որ այդ պրոցեսն սկսեց լուրջ անհանգստացնել հայ մտավորականությանը: Այդ խնդրին անդրադարձան Մ.Նալբանդյանը, Հ.Սվազյանը, Ա.Հայկունին, Մ.Մամուրյանը, Ծերենցը, Գր.Արծրունին, Ռաֆֆին և ուրիշներ:

«Գաղթականության հարցը ամենակարևոր տեղն է բռնում Տաճկաստանի հայերի մեջ, - գրում է Ռաֆֆին: - Ամեն տարի հազարավոր երիտասարդներ Վանից, Մուշից, Բաղեշից, Կարինից և այլ գավառներից, դիմում են դեպի Կ.Պոլիս՝ իրենց ընտանիքի համար ապրուստ շինելու: Այդ հոսանքը գնալով ավելի ընդարձակ քանակություն է ստանում, քանի նույն երկրներում ժողովրդի ապրուստի հնարները դժվարանում են: Ցավալին այն է, որ պանդուխտներից շատ քչերին է հաջողվում վերադառնալ յուր հայրենիքը. մեծ մասը կորչում են մայրաքաղաքի մեջ, թողնելով հազարավոր անբախտ և անխնամ ընտանիքներ»[1]:

Աշխատելու և վաստակելու անսահման մղումով Կ.Պոլիս և նավահանգստային այլ քաղաքներ գաղթած գավառահայերն այստեղ անելիք չունեին: Չնայած արգավանդ հողին և բազմահարուստ հումքին, Թուրքիան շարունակում էր մնալ հետամնաց երկիր նաև ֆաբրիկագործարանային արդյունաբերության գծով: Տիրապետում էր արտադրության տնայնագործական, ֆեոդալական եղանակը: Երկրի ներքին շուկան հեղեղված էր եվրոպական ապրանքներով:

Գ.Արծրունին «Թուրքաց հայերի տնտեսական դրությունը» աշխատության մեջ վկայում է, որ Արևմտյան Հայաստանը բազմահարուստ է օգտակար հանածոներով, որոնք, սակայն, անօգտագործելի են մնում: Քարածխի հսկայական պաշարներ ունենալով հանդերձ, այն ներմուծվում էր Անգլիայից: «Կուսրինի շրջակայքում կան մեծ թվով նավթահանքեր, բայց մշակողներ չկան, - գրում է Արծրունին, - իսկ բնիկ ժողովուրդը օգտվում է այդ նյութից ամենանահապետական ձևով: Բնակիչները իջեցնում են հորերի մեջ փալասներով փաթաթված

[1] «Մշակ», 1875, №2

փայտեր և երբ որ նավթը բավական ծծվել է փալասների մեջ, տանում են տուն և գործ են ածում այդ ձևով հավաքածը թե վառելիքի և թե լուսավորության համար»[2]:

Թուրքիայում ազգային արդյունաբերական ձեռնարկություններն այնքան չնչին էին, որ դրանք անկարող էին աշխատանքով ապահովել պանդուխտների հսկայական քանակին: «Մտրակող կարիքը դուրս էր նետում երկրի խորքից աշխատունակ ձեռքեր՝ չտալով նրանց որակյալ և կերակրող աշխատանքի հնարավորություն, - իրավացիորեն գրում է Ա.Հովհաննիսյանը: - Եվրոպական կապիտալի հախուռն մուտքը, սաստկացնելով ֆեոդալական ճնշումն ու հարստահարությունը, առաջացնում է երկրում բանվորական պահեստի բանակ՝ միջոց չընձեռելով երկրին կազմակերպել արտադրական աշխատանքի շուկա, ներգրավել նրա մեջ բանուկ ձեռքեր, դարձնել բանվորական պահեստի բանակը ժամանակակից տեխնիկայի վրա հանգչող աշխատանքի գործող բանակ: Սրա մեջն էր հենց վերապրած ճգնաժամի էությունը...»[3]:

Պանդուխտ մշակը ճարահատյալ հանդուրժում էր ամեն վիրավորանք, անտարբերություն, հալածանք, միայն թե վաստակեր ու ճար ունենար տուն վերադառնալու: Նա սոցիալական ամենատարրական իրավունքից զուրկ «օտար – հարազատ» էր, որ բազմանում էր հայրենիքում աճող դժբախտություններին զուգահեռ:

Տարբեր առիթներով Ռաֆֆին տվել է պանդուխտների կյանքի սրտակեղեք պատկերներ: «Նոցա /պանդուխտների – Ս. Գ./ կերակուրն է՝ զինվորներից ավելացած սոմունը և մեջիդների միաբանության /սոֆթաների/ սեղանից ավելացած փշրանքը: ...Նոցա օթևանն է բաղնիքների վառարանի /թուլամբարի/ մոխիրները...

Այս ժողովուրդը առյուծի ուժ ունի, բայց գառնուկի սիրտ... Նա յուր բոլոր մարմնական զորությունը սպառում է այն գործի մեջ, որ նավերից փոխադրում է դեպի ցամաք այն ծանրությունները, որին կրակի և օվկիանոսի ուժերն հազիվ կարողանում են դիմանալ...»[4]:

Քիչ է ասել, թե ծանր էր պանդուխտ հայի կյանքը: Նրանք Թուրքիայի տնտեսական աղքատության կենդանի խորհրդանիշն էին: «Պոլսո հայերի համար, - գրում է Ալպոյաջյանը, - տեսակ մը ամոթ ու նախատինք էր պանդուխտներու վիճակը, որոնք մասնավորապես իրենց տգիտության պատճառով

---

[2] Գր.Արծրունի, Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 7:
[3] Աշ.Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1, էջ 362:
[4] «Մշակ», 1876, N₀14:

Կ.Պոլսո մայթերուն վրա ամենեն նվաստ գործերու մեջ կը տվայտեին»[5]: Նրանց արհամարում էին անգամ ազգակիցները, իսկ մահմեդական վերնախավերը ֆիզիկական ծանր աշխատանքներ էին տալիս՝ չնչին վարձատրությամբ: Նման աշխատանքներն անգամ շատ դժվարությամբ էին ձեռք ընկնում: Ժամանակի հայ գրողները պանդուխտների կյանքի նկարագիրը տալիս «վրձինը արցունքի արյունի մեջ կը թաթխեին»: Այդպես է տվել Կ.Պոլսում ապրող պանդուխտների կյանքի իրական պատկերը գրող, հրապարակախոս Մելքոն Կյուրճյանը /Հրանտ/ 1888-1889թթ. հրատարակած «Պանդուխտի կյանքեն» նկարագրություններում:

Սարսափելին նաև այն էր, որ ահավոր տաժանալի աշխատանքից հետո պանդուխտների տուն «վերադարձն էլ ուրախալի չէ, որովհետև բավական է որ ո՛րևէ մի անօրեն պաշտոնեի քիթը հոտ առնե և ահա խեղճ մարդոն խնայած մի երկու ստակը անխնա կգրավին կամ որևէ կերպով ճնշելով կը հափշտակեն»[6]:

Գաղթն ու պանդխտությունը գոյություն ունեին նաև Արևելյան Հայաստանում: Սակայն, այստեղ, հատկապես հետռեֆորմյան շրջանում, գաղթականները կարող էին աշխատանք գտնել ճանապարհաշինության /հայտնի է, որ դարի երկրորդ կեսից ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ երկաթուղային և խճուղային ճանապարհաշինությանը Անդրկովկասում/, զարգացող լեռնարդյունաբերության մեջ, Բաքվի նավթահանքերում: Չնայած նրանց վիճակը ևս հեռու էր նախանձելի լինելուց, բայց գոնե հիմնականում աշխատանք ունեին, կարող էին վաստակել, և, որ ամենակարևորն է՝ աստիճանաբար ձևավորվում էին որպես սոցիալական խավ:

Սուլթանական կառավարությունը ոչ միայն չէր անհանգստանում և չէր փորձում որևէ բան ձեռնարկել գաղթն ու պանդխտությունը կանխելու համար, որը, վերջին հաշվով, հարվածում էր Թուրքիայի, առանց այն էլ, հետամնաց տնտեսությանը, այլ, որոշ նկատառումներով, խթանում էր այդ պրոցեսը՝ դրա մեջ տեսնելով Արևմտյան Հայաստանը հայազրկելու իր քաղաքական ծրագրի իրականացմանը նպաստող հանգամանք: Դա որոշակի տեսանելի էր և հայ մտավորականներից շատերը անդրադարձան այդ խնդրին: «Բայց հայք բավականին լրջամիտ պիտի լինին հասկանալու համար, որ իրենց փրկությունը գաղթականության մեջ չէ, - գրում է Մամուրյանը: Որքան որ ծանր լինի իրենց ներկա վիճակը, որչափ որ Օսմանյան կառավարությունը... այնպիսի ընթացք

---

[5] Ալպոյաջյան, Պատմություն հայ կեսարիո, Կահիրե, 1937, հ.1, էջ 1250:
[6] Արևելյան մամուլ, 1878, նոյեմբեր, էջ 1878:

մը բռնած կերևին, որ նպատակ ունենա հայերը ստիպել, որ գաղթեն կամ վայրագ ցեղերու հարվածոց տակ չքանալ և Հայաստան անշեն մնալով, բոլորովին ապագա երկյուղ ու մտատանջութենե, կամ զայն պաշտպանելու ստիպումեն ազատ լինին...»[7].

Հայերին ջարդելու գաղտնի հրահանգներն ավելի հարթեցին գաղթի ճանապարհը: Ազգի թվական գերակշռության կորուստը հայրենիքում՝ քաղաքական կարևորությունից կգրկեր հայ ժողովրդի դատը: 70-ական թվականներին մեծ խոսակցություն բացվեց գաղթի պատմական և քաղաքական խնդիրների շուրջը: Մամուլը հեղեղվեց այն կանխելու ահազանգերով: Գաղթը ազգային ինքնասպանություն է, գաղթականության վախճանը անձնասպանություն է՝ եզրակացրեց »Շահենն ի Սիպիրի« հեղինակը:

Սմայանում էին հայկական գավառները, և դրանք բնակեցվում մահմեդականներով: Ահա թե ինչու հատկապես արևմտահայերի օրհասական վիճակն ու պանդխտությունն էր անհանգստացնում հայ առաջավոր մտավորականությանը: Ղարաբաղի մելիքների օրինակով Ռաֆֆին զգուշացնում և շեշտում էր գաղթի կորստաբեր հետևանքները: «Ղարաբաղի հայոց գաղթականությունը գլխավոր պատճառը դարձավ Ղարաբաղի հայկական իշխանությունների կործանմանը, - գրում է նա: - Փանահ խանը, Իբրահիմ խանը և այլ դրանց նմանները այնքան չվնասեցին հայոց մելիքություններին, որքան վնասեցին իրենք՝ մելիքները, երբ թողնելով հայրենի հողը, սկսեցին իրենց ժողովրդի հետ օտար հողի վրա ապահովություն որոնել: Կտրվելով հայրենի աշխարհից, նրանք զրկվեցին ամեն բանից...»[8]:

Ժամանակակիցները գաղթի ու պանդխտության պատճառների հարցում միակարծիք չէին: Այսպես՝ ոմանք գտնում էին, որ մահմեդականների մոլեռանդությունն ու կրոնական խտրականությունն են ծնում գաղթականություն: Գյուղացիների ունեզրկման, հետևաբար նաև՝ պանդխտության առաջացման պատճառները Արսեն Թոխմախյանը տեսնում էր քաղաքներին մոտ լինելու հանգամանքի մեջ: «Որքան որ գյուղերը մոտ են քաղաքին, - գրում էր նա, - այդ չափով էլ ավելի խիստ ենթարկված են քաղաքացոց հարստահարությանց և ավելի շատ աղքատ են»[9]: Կային նաև այնպիսիները, որոնք գաղթականության պատճառը տեսնում էին հայ ժողովրդի, այսպես կոչված, «գաղթասիրական հակման» մեջ և դա համարում էին ազգային արատ: «Գաղթականությունը մեր

---

[7] «Արևելյան մամուլ», 1878, հոկտեմբեր, էջ 211:
[8] Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ.10, Եր., 1964, էջ 282:
[9] Ա.Թոխմախյան, Մասիս լեռնոր հարավային ստերետները, Թիֆլիս, 1882, Բ մաս, էջ 16-17:

ազգայրս ախտերից մեկն է.... - գրում էր «Մեղու Հայաստանին». - մեր գյուղացին թողնելով գյուղը և երկրագործությունը կամաց - կամաց հեռանում է հողից և սկսում է վաճառականության խախուտ և անբարոյականացնող ճանապարհովն ընթանալ: Մեր ժամանակն այնպիսի ժամանակ է, երբ գյուղացին ամուր պիտի բռնե յուր հողը յուր ձեռին...»[10]: Ժողովրդի հոգսերը ճիշտ հասկացող Ռաֆֆին, շատ մտավորականների նման, այդ «Կամովին ու ակամա գերության» /Գ.Սրվանձտյանց/ պատճառների մեջ տեսնում էր տնտեսական և քաղաքական հիմնավոր շարժառիթներ: Արևմտահայ գյուղացիության հողազրկության, սուլթանական Թուրքիայի հարկային ծանր քաղաքականության, վաշխառության կողոպտիչ տոկոսների, քուրդ ցեղապետերի բարբարոսությունների մեջ էր փնտրում նա պանդխտության արմատները: Հայ գյուղացին անկարող էր տանել բազմապիսի հարստահարություններն ու կամայականությունները: Նա հարկադրված վաճառում էր վերջին լծկան անասունը և հեռանում հայրենի տնից: Մեկը մյուսի ետևից ամայանում էին հայկական շեներն ու գյուղերը: 70-80-ականներին մամուլը, հրապարակախոսությունը առաջադրվող ազգային – սոցիալական ծրագրերում կարևոր տեղ էին հատկացնում հատկապես գաղթին: Հայ առաջավոր միտքն իրավացիորեն այն համարում էր ողբերգություն և «ազգակուլ» երևույթ: Խրիմյան Հայրիկը, Գ. Սրվանձտյանցը, Ռաֆֆին, Արծրունին, Ծերենցը իրենց հրապարակային ելույթներում չափազանց կարևորում էին այդ հարցը և փորձում ոչ միայն տեսական, այլ նաև գործնական լուծումներ առաջադրել: Գաղթն ու պանդխտությունը դիտվում էին որպես ազգային նշանակության խնդիր և ազգային շահերի տրամաբանությամբ առաջարկվում էր այն հաղթահարել հասարակության հատկապես կարող ուժերի գործուն աջակցությամբ: Մելքոն Կյուրճյանը «Մասիս»-ի էջերում տալով պանդուխտների կյանքի ահավոր պատկերը, գրում է, որ այդ երևույթի առջևն առնելու համար «... քահանան ի'ր բաժինը ունի, գրողն ալ իր մասն ունի, ունևորն իր պարտավորությունը, պատրիարք, վարչություն, երեսփոխանություն, առաջնորդք իրենց պարտքն ունին: Պանդխտություն եթե այսպես շարունակվի, մեր գավառներն անմարդի կընե այսօր կամ վաղը. այս համոզումն ունեցեք, ահավոր ճշմարտություն է»[11]: Հայ դեմոկրատական միտքը տենդորեն ելք էր փնտրում և կարևորում, որ հայը պիտի «...յուր հայրենական հողից ստանար յուր ծնունդը և թե ոչ մեծ քաղաքներում համալություն աներ:

---

[10] «Մեղու Հայաստանի», 1882, N48:

[11] Տես Արփիար Արփիարյան, Պատմություն ԺԹ դարու Թուրքո հայոց գրականություն, Կահիրե, 1943, էջ 137:

Սիա գլխավոր խնդիրը, որո վերա պետք է ուշադրություն դարձներ Սգգ.Ժողովը»[12]:

Օտար հողերում դեգերող հայ ժողովրդի ցրված բեկորներին անհնար էր փրկել ծուլումից, օտարացումից: Նրանց համեմատում էին արմատախիլ արված բույսի հետ, որ հիմքից զրկվելով՝ ամենաթեթև քամուց հեշտությամբ ճկվում է այս ու այն կողմ[13]: Սոցիալական այս խավը հոգեբանորեն նույնպես փոխվում էր և բոլոր տառապանքներին ավելանում էր ևս մեկը՝ թերարժեքության բարդույթը: Այս առումով ուշագրավ է Մամուրյանի այն կարծիքը, որ «...արդեն ֆիզիկապես գաղթական՝ աշխարհիս չորս կողմն... մտապես և բարոյապես ալ կգաղթե, այսինքն անզգալորեն կօտարանա»[14]:

Դեռևս 1860թ. արևմտահայ առաջավոր հասարակական գործիչ Գալուստ Կոստանդյանը իր «Միություն, միաբանություն» հոդվածում ուշադրություն էր հրավիրում այն խնդրին, որ Կիլիկիայի հայերը, որոնք մի քանի դար ապրել և անկախ թագավորություն էին ստեղծել Միջերկրականի ծովեզրին, Ռուբինյանների անկումից հետո հարկադրված են եղել հեռանալ և սփռվել աշխարհով մեկ: Նրանց զգալի մասն իսպառ կորել, ծուլվել էր: «Հայաստանը մերկ է և կործանված, յուր զավակները օտարացած և ցրված՝ միշտ կորսվելու ենթակա: Եվ մեր պարտքը ի՞նչ է հիմա, չկորսվելու համար ճար մը գտնելու ջանալ»[15]: Ի՞նչ ելք էր առաջարկում Կոստանդյանը՝ նոր կենտրոնացում: Հայերը կրկին պիտի կենտրոնանան, միավորվեն և ստեղծեն իրենց պետությունը: Եվ, որովհետև հայերի բնօրրանը հարմար աշխարհագրական դիրք չունի, իսկ ժամանակակից տնտեսությունն ու մշակույթը առավել հաջողության են հասնում հատկապես ծովեզերքում, ապա պետք է հարմար տեղ փնտրել, մի նոր «Ավետյաց երկիր» գտնել և մատնացույց անել հայերին: «Այսու պատճառով, - շարունակում է հեղինակը, - պետք եմք ընտրել երկիր մի, ուր թե՛ հայրենիք եղած ըլլա և՛ թե՛ ընդարձակ ծովեզր մը ունենա: Այսպիսի երկիր մը կըրնամք կ'ա ըսել, ցուցընելով Կիլիկիան»[16]: Նրան համակարծիք էր նաև Ծերենցը: Որպես տարբերակ, առաջարկվում էր նաև Հնդկաստանը՝ նկատի ունենալով, որ այստեղ, ժամանակին, հայերը հարուստ և ազդեցիկ գաղթավայրեր են ունեցել ու հայկական մշակույթը զարգացրել:

---

[12] «Մշակ», 1875, №2:
[13] Տես նույն տեղը:
[14] Ս.Սամուրյան. Երկեր, էջ 205:
[15] «Միություն» հանդես Հաշտենից, Զմյուռնիա, 1860, №4, էջ 27:
[16] «Միություն» հանդես Հաշտենից, Զմյուռնիա, 1860, №4, էջ 27:

Այս մտայնությանը նոր հույս ներշնչեց 1862թ. Զեյթունի հերոսական ապստամբությունը: Մարաշի կառավարիչ Խուրշիդ փաշայի զորքերի խայտառակ փախուստը ոգևորության նոր ալիք առաջացրեց և մեծ լիցք տվեց հայ ազգային ինքնագիտակցությանը: Կիլիկիայի նկատմամբ մեծացավ Ծերենցի հետաքրքրությունը: Հատկապես 1876թ. ապրիլին բուլղարների ապստամբությունը թուրքերի կողմից արյան մեջ խեղդելուց հետո, ուժերի ահռելի անհավասարությունը հաշվի առնելով, Ծերենցը հանգեց այն եզրակացության, որ Թուրքական տիրապետության տակ հայերը որևէ ապագա չունեն և «վարեն» եկող ապստամբություններն էլ արյան ու մեծ զոհողությունների առիթ կարող են տալ*:

Ժամանակին այս հարցի շուրջը մեծ բանավեճ առաջացավ, հատկապես, երբ տպագրվեց Ծերենցի հայտնի հոդվածը[17]: Օբյեկտիվորեն նկարագրվելով հայերի անմխիթար վիճակը թուրքական բռնակալության պայմաններում, բայց համաձայն չլինելով Ռաֆֆու այդ տեսակետին, թե՝ հայ ժողովրդի երջանկությունը կարող է լինել միայն «արյունով սրբագործված հայրենի հողի վրա», Ծերենցը արևմտահայերին որպես տնտեսական թշվառությունից փրկվելու, «հաց, ազատություն, երջանկություն» գտնելու, բարեկեցիկ ապրելու ելք առաջարկում էր բախտը փորձել օտար երկրներում, ուր, ըստ նրա, կարելի էր հեշտությամբ հարստանալ: Ժամանակակիցներից ոմանք պաշտպանեցին նրան: Սակայն, Ծերենցի դեմ խիստ հոդվածներով հանդես եկան Գր. Արծրունին /«Մենք էլ հրեաներ ենք» առաջնորդողով/, Ռաֆֆին /«Գժատուն» ֆելիետոնով/ և ուրիշներ: Վերջինս Ծերենցի առաջարկած տեսակետները համարեց «խելագառություն», «կարճատեսություն», «հիմար և աններելի քարոզ»[17]: Ռաֆֆին գտնում էր, որ Ծերենցի հեռավոր գաղթի հորդորը նույնն է, ինչ ժողովրդին գահավեժ անդունդ հրելը: Այս տեսակետը հաստատելու համար նա բազմաթիվ օրինակներ էր բերում հենց հայ ժողովրդի անցյալից:

Ռուս – թուրքական պատերազմի տարիներին գաղթի պրոցեսը չափազանց ակտիվացավ և ռուսական զորքերի հետ տեղաշարժ էին լինում նաև

---

* Ծերենցն այնքան էլ հետևողական չէր այս տեսակետում: Մեկ տարի անց իր «Թորոս Լևոնի» պատմավեպի համար նա ընտրեց այն ժամանակները, երբ օտար զավթիչների դեմ ոտքի կանգնելով ժողովուրդը բացահայտում էր իր ազգային բնավորությանն ազատասիրական, հայրենասիրական բարձր առանձնահատկությունները և միանգամայն իրավացի Ստ.Պալասանյանն այս մասին պիտի գրեր՝ »քիչ գիրք կպատահի, որ «Թորոս Լևոնիի» նման յուր ժամանակին գրված ու հրատարակված լինի»: «Փորձ» 1879, №2, էջ 135-136:

[17] Տե՛ս «Արևելյան մամուլ», 1876, հունվար, էջ 22:

[17] «Մշակ», 1876, №14:

հայերը: 1878թ. Ազգային ժողովում արդեն քննարկվում էր այն հարցը, որ Բայազետի հայերը «անշուշտ քրդոց վրեժխնդրության զոհ չերթալու համար՝ ռուսաց բանակի հետ մեկտեղ գաղթեր են այն կողմերեն»[18]: Երևանի, Ալեքսանդրապոլի և շրջակա գյուղերի ճանապարհների վրա կարելի էր տեսնել «բազմաթիվ թուրքահայեր, պատռած հագուստներով և այլանդակված մարմնով, որոնք փախել էին Հայաստանից, քրդերի գազանություններից», - գրում էր «Մշակը»[19]: Արևմտահայերի գաղթը ահագնացող չափերի հասավ պատերազմի ավարտին, երբ ռուսական զորքերը ետ էին քաշվում գրաված տարածքներից: Չնայած հայազգի գեներալ Լազարևը հատուկ կոչով դիմեց հայերին՝ չգաղթել հայրենիքից, սակայն «...գաղթողները վստահ չեն կենաց ապահովության վրա և կարծում են վերոհիշյալ հիման վրա, թե ռուսաց զորքը հեռացածին պես, պիտի վրա հասնի քրիստոնյաների ընդհանուր կոտորած», - գրում է «Մշակը»: Հայերի գաղթը կանխելու ուղղությամբ մեծ աշխատանքներ էին տանում Կարինում ժամանակավոր ոստիկանապետ նշանակված Կ.Կամսարյանը և նրա օգնական Գրիգոր Նիկողոսյանը[20]: Ակայն Ալաշկերտի հայերը, Գրիգոր Նիկողոսյանի վկայությամբ «մինչև վերջին մարդը դաշտերը և տները թողած, կրակի և անեծքի տված՝ գաղթում են Ռուսաստան»[21]:

Արդահանից, Ալաշկերտից գաղթած հայերը սարսափելի ծանր վիճակում էին: Աննկատելի չէր արդեն ռուսական կառավարության վերաբերմունքը գաղթականների նկատմամբ: Անտուն, անպաշտպան «Ռուսիո տերության հրամանին կսպասեն, որ տեղ մը հաստատվին, և հավանական է, որ Վլատիկավաս, այսինքն՝ հայրենիքեն հեռու աքսորանաց վայր մը ղրկվին, ուր անտարակույս աղետ կորուստ, մահ կսպասեն իրենց» - գրում է Մամուրյանը[22]:

Հանգամանքների օրհասական պահը թելադրում էր արևմտահայ գործիչներին շարժելու ազգի ինքնագիտակցությունը և նրա ներքին կարողությունները համախմբելու քաղաքական պայքարի գործնական խնդիրների իրականացմանը: Գավառից պանդխտության էին մեկնում հիմնականում երիտասարդները, այսինքն՝ նրանք, ովքեր պիտի կազմակերպեին հայրենիքի ինքնապաշտպանությունը: Այս առիթով «Անգլիական նամականի»-ում Մամուրյանը մատը վերքի վրա դնելով, գրում է՝ «Այս հաշվով՝ ծերերն ու կիները կպաշտպանեն Հայաստանը, քանի որ գավառացի մարդիկ, որոնց ամեն տեսակներն

---

[18] «Մշակ», 1878, №135:
[19] Տես «Մշակ», 1877, №11:
[20] Տես Սարուխան, Հայկական խնդիրն ու Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 209:
[21] «Մշակ», 1878, №157:
[22] «Արևելյան մամուլ», 1878, էջ 211-212:

այստեղ /Կ.Պոլիսում, Զմյուռնիայում - Ս.Գ./ կգտնվին և սովորաբար ստորին պաշտոններ կվարին, կթողուն ավազակներու ձեռքն արտ, տուն, կին ու զավակ, կով ու ոչխար և ապրուստի պատրվակավ Թուրքո այլևայլ քաղաքները կթափառին, կմաշին ու կմոլորին, ստեպ անխնամ ու անդրամ թողլով ընտանիքը: Սա պարզապես վատություն է: Վասնզի՝ եթե վտանգավոր է մնալ Հայաստան, կին ու տղա ինչու՞ համար կթողուն անտեր ու անպաշտպան, եթե ապրուստի համար կգաղթեն, ինչու՞ համար անոթի կթողուն ընտանիքը»[23]:

Կացությունը հիրավի շատ բարդ ու վտանգավոր էր: Հայ դեմոկրատ մտավորականներին ամենից շատ անհանգստացնում էր նաև այն, որ զանգվածային գաղթը, պանդխտությունը, մայր հողից հեռանալը կարող էին մեծ սպառնալիք հանդիսանալ հայերի հավաքական գոյությանը, ազգային միավորմանը, ազգային - ազատագրական պայքարին և, ի վերջո, հայ ժողովրդի քաղաքական նպատակների իրականացմանը:

Բայց բարոյական խրատներն ու պլատոնական ճառերը անկարող էին կանխել այդ պրոցեսը: Քննադատելով Ազգային Ժողովին ու պատրիարքարանին, Ռաֆֆին հեգնում էր՝ «Ազգ. ժողովը վճռեց ազդարարություն տալ ծխատեր քահանաներին և եկեղեցիների երեսփոխաններին, որ նրանք խրատեն և համոզեն պանդուխտներին չորս տարուց ավել չմնալ Կ.Պոլսում, այլ դառնալ իրանց հայրենիքը: Միշտ պալիատիվ միջոցներ և ոչ արմատական... Փոխանակ մտածելու այն միջոցների մասին, որոնք հնար տային գաղթողներին մնալ իրենց հայրենական հողի վրա և հաստատուն ապրուստ ունենալ, ժողովը յուր վճիռով տերտերներին և մղոսիներին է դիմում...»[24]: Եվ ըստ մեծ հայրենասերի միայն հայ երկրագործի վիճակի արմատական վերափոխումը, այսինքն՝ ագրարային հարցի լուծումը, գյուղացու տնտեսական վիճակի բարելավումն ու հարկերի թեթևացումը կարող էին կանխել այս կործանարար երևույթը: Առաջարկվում է նաև երկրում գործարաններ հիմնել և աշխատելու պայմաններ ստեղծել:

«Շատախոս ազգասերներից ոչ ոքի սիրտը չէ ցավում այս ազգակործան /պանդխտության – Ս.Գ./ իրողության վրա... դեռ մի հարուստ հայ չէր գտնվել, որ այդ կենդանի մեռելների առաջն առնի, մի երկու գործարան հիմնելով այն երկրում, որից ոչինչ արդյունք չստանալով փախչում է խեղճ մշակը»[25]:

---

[23] Ս.Մամուրյան, Երկեր, էջ 196:
[24] «Մշակ», 1875, №2
[25] «Մշակ», 1878, №161:

Զրկված լինելով հողից, տնից, ընտանիքից, հայ պանդուխտներն ամբողջ էությամբ շարունակում էին կապված մնալ գավառների հետ, ուր սովի ու բռնության պայմաններում շարունակում էին տառապել նրանց ընտանիքներն ու հարազատները: Ռաֆֆին նաև սոցիալական այս շերտի մեջ էր տեսնում ժամանակի հասարակական քաղաքական պայքարի շարժիչ ուժը և այն համարում այդ առաջադիմական ընդվզումների խթանը: «Հայրենիքից հեռացած, այդ պանդուխտ հերոսներն են, որ ամեն անգամ մի ազգային ծանր հարց բարձրանալիս, շրջապատում են պատրիարքարանի չորս կողմը, դռներ և պատուհաններ են փշրում, աղմուկ բարձրացնում և արդարություն են խնդրում: ...Եվ ամեն բան կորցրած լինելով, - տուն, տեղ, հայրենիք, - նրանք այլևս ոչինչ կորցնելու չունեն, և առանց երկյուղի բողոք են բարձրացնում, ու իրանց թշվառ, անտեր ընտանիքների համար ազատություն են խնդրում պատրիարքի օձիքից բռնելով...»[26]: Ահա թե ինչու հայ մտավորականներից շատերը Թիֆլիսում աշխատանք փնտրող արևմտահայ պանդուխտ մշակներին ազատագրական շարժման գաղափարներ են պրոպագանդում:

Նույն նպատակն էին հետապնդում նաև Արփիար Արփիարյանը և ուրիշները, որոնց ջանքերով պանդուխտների համար Կ.Պոլսում կիրակնօրյա դպրոցները էին բացվել, և որտեղ գրագիտություն ուսուցանելու հետ մեկտեղ հայրենասիրական գաղափարներ էին քարոզվում: Ժամանակակիցների վկայությամբ ունկնդիրները, որոնց մեծ մասը վանեցիներ էին, անհագ հետաքրքրությամբ էին մասնակցում այդ պարապմունքներին:

Գավառի հետ կենդանի շփում ստեղծելու, ինչպես նաև գաղթն ու պանդխտությունը կանխելու նպատակով, պատրիարք Ներսես Վարժապետյանը երեք վարդապետների, որոնց թվում նաև Գարեգին Սրվանձտյանին ուղարկվում է արևմտահայ գավառները, որտեղ նրանք ուսումնասիրում են գյուղացիների վիճակը: Արևմտահայերի համար դա հուսադրող և բարոյական մեծ աջակցություն էր: Ներսես պատրիարքին գրած իր նամակներից մեկում Սրվանձտյանը գրում է՝ «Ձեր սրբազանութենեն տարած օրհնությունները սփռելով Հայաստանի անհույս ժողովրդի մեջ մխիթարեցինք զիրենք: Ուրախ եմ ըսելու թե հայ ժողովուրդն իրեն համար էլ անտանելի եղած տարերքի ի վեր գոյից և կենաց զոհությամբ զրկել և հարստահարյալ վիճակով հաստատած կմնա իր հայրենի շենքի և ավերվաց վրա նստել, հուսալ և սպասել»[27]:

---

[26] «Մշակ», 1878, №42:
[27] «Մասիս» 1879, №2224: